



## 2. ՍԻՆԱՆ ԹԱՔԱՎԵՐԸ

Ինքն ա, չինքն մին թաքավեր ա ինքն: Լտրան ինքն ա իրեք տղա: Թաքավերը ուրան տըղորցը նասյաթ ա տամ, վրեր ինքը մըեռնի, ուրան կլըրեզմանին յրան օխտը օր դարավուկ կենան: Թաքավերը վրեր մըեռնքն ա, մըեք տղան քըշերը փաննարը յոր ա օնքն, քլընքն դարավուկ քաշքն:

Տըղան նըկատըմ ա, վեր մին վազը ա կյամ: էտ վազըը կըտաղած կյամ ա կլըրեզմանը քանդըմ, թաքավերին մեյիդը հանքն, իրեսին իրեք հետ թըքըմ, էտ տըղին էլ մին լնվ կյոսոքն, քլընքն:

Քըշերավ տըեսնքն ըն, վրեր էտ տղան կյամ չի, եր ըն կենքն հետան քլընքն, տըեսնքն էտ տըղին օշը տարած, ըտըեղ եր ընգած, մեյիդն էլ էն դուլին եր ընգած: Մեյիդը թաղըմ ըն, էտ տըղին էլ յոր օնքն, կյամ:

Էն մին ուրուգյոնը թաքավերին միշնակ տըղան ա քլընքն դարավուկ կաղնքն: Քըշերը էլհա էտ վազըը կյամ ա, կլըրեզմանը քանդըմ, մեյիդը հանքն, իրեսին իրեք հետ թըքըմ, քլընքն: էտ տըղան էլ վախելան նըհետ օշը տանքն ա: էքսը կյամ ըն տըղին ետ պերքն, մեյիդը թաղըմ, քլընքն:

Իրեքինչի ուրուգյոնը պուճուր տըղան ա քլընքն:

Քըշերվա կեսին տըեսնքն ա, վրեր վազըը կյամ ա: Տա կյոլըը կացած տըեղան թըվանգյը թուշ ա օնքն, թա ըսպանի, վրեր լնվազըը ըսկըսքն ա կլըրեզմանը քանդիլը, էտ տըղան գյոնլլան յրա յա անքն թուշ ճըկատան տամ: Վազըըը հնլն սատկըմ չի, փըլքն ա:

թա էտ տըղան կորչի, ամմա տըղան մընըմ ա տըեղը կաղնած, միննակ ժըեռքին փաննարը հանգըմ ա: էտ տըղան մին էլ ա գյուղ-լան յրա անըմ, վագրը եր ա ընգնըմ, ստակըմ: էտ տըղան վագրին մորթին մաշկըմ ա, յոր օնըմ, հտավ յեշըմ ա, տըեսնըմ մին հեռու տըեղ կրակ ա ըրվըմ, տա էտ մորթին թողըմ ա ըտըեղ, ճընապար-վըմ դիրի կրակը, վըեր փաննարը նի կըցընի: Ճընապարին պըտահըմ ա մին պառավ մարթի: էտ մարթը նըստած, թիլ ար կըծկըմ, սըեվ թիլը պըռծած, օղըմ ար թա սիպտակը ըսկըսի:

էտ տըղան ասըմ ա. — Պարո՞վ, ա դորփեր:

— Պարո՞վ, ա ախպոր տըղա:

— Հի՞նչ ըս անըմ:

— Կրծեգ ըմ կըծկըմ:

— Ըտրանք էտ հի՞նչ կրծկընի յա՞:

— էս սըեվը քըշերն ա, էս սիպտակը ցիրեկը, քըշերը պըռծալ ա, մըհեգ էլ սիպտակըն ըմ կըծկըմ:

— Ա՛ դորփեր, տու հալա քըշերը պահի, հալա սիպտակը կըծ-կիլ մի, վըեր ես քյինիմ, էն հըեռու տըեղան կրակ յոր օնիմ, փաննարը նի կըցընիմ, կյամ:

— Պա՛հ քու տոնը շինվի՛, միշև տու ընդեղ քյինիս, կյաս, մին տարի կտըեռնա, հի՞նչ ա, օղըմ ըս ժողովուրթը մին տարի քոն ինի՛:

Ըտրանք ուրոնը նըհետ հոջնթ ըն տամ: էտ աըղին կոխկը հաստ ար, ուրան ասածի, պառը կո՛շտ: Տա էտ պառավ մարթին կըռները կապըմ ա, կըծկընին էլ կըտորըմ, թող անքմ քըցըմ մինը էս դուը, մինը էն դուը, ինքը քյինըմ կրակի:

Վըեր տըեղ ա հըսնըմ, տըեսնըմ ա էտ կրակին կոխկին չըրքը-պուլլո՞ր քոասուն օշափ քոն իլած, մեշ տըեղըն էլ էտ մըեծ, դըռ-դոռանչի նման կրակըն ա, յըրան էլ քառասուն ունգլնամվեր մին դա-ղան, մըեչին քառասուն վեխճար ա իփում: էտ թաքավերին պու-ճուր տըղան քյընըմ ա ըտրանց կըլխավը լոք տամ, դազանը էրկու ժըեռքավ պըցըրցնըմ, էն դուին տընոնմ, կըրակ յոր օնըմ, փաննարը նի կըցընըմ, դազանը կըրակին յրան տիրած քըսկարինքին տընոնմ, թա ետ տըեռնա, էտ օշափներան մինը զարթնըմ ա հարալ տամ, թա. — Եր կացիք, հա՛, եր կացի՛ք, մըեր մուրաղը կադարողը յըե-կալ ա...

Լոխ եր ըն կըենըմ էտ տըղին փըռնըմ, ասըմ. — Թա մըեր մու-րաղը կըկադարիս, քյըեզ սաղ կթողինք, թա կադարիլ չըս, քյըեզ կու ընք տալու:

Տըղան ասում ա. — Հի՛նչ ա ծեր մուրաղը:

— Ըստըղան մոտե մին թաքավեր կա, ըտրան մին ախչիզյ օնի, մունք օղում ընք, տամ շի, բիդի քիինիս օղիս, պրերիս մրեզ տաս: էտ տըղան ճարը կըտրած խոսկ ա տամ: Եր ըն կըհնում, քյընում էտ թաքավերին պալատին կոշտը:

էտ տըղան ասում ա. — Քյըեցեյ մրեծ-մրեծ մեխեր պրերիք էս պատին թըխինք, յըես պըցընանամ պալատին կըլոխը, ծըզ էլ մին-մին պըցըրցնիմ: Մեխերը թըխում ըն: Ամմա առաչ էն տըղան ա պըցընում, հտավ էտ օշափին մին-մին ըսկըսում ըն պըցընալը: էտ տըղան պըցընացածին կըլոխը կտրում ա, քըցրմ պատին էն դուր. գըվաքիս թա անց ա կըցընում: Իտի էտ քառասուն օշափին կըլոխընին կըտրում ա, ըսպանում, ինքը քյընում, տրեսնում մին տոռնը: Տոռնը պրեց ա անում, տրեսնում մին նախշուն ախճիզյ ըտիզ քոն իլած: Վըններին նան կըլխին դուլին մին-մին վըեսկե կուլա, մաչին մըղրաճոլը: էտ տըղան մըղրաճոլը խըմում ա, էտ ըխճըկանը մին լնվ պալում, թա քիինի, մին էլ ա տրեսնում մին օշափի շանք օց պատան տոնս յըեկավ, օղում ա թա էտ ըխճըկանը կուլ տա: էտ տըղան վըեր թըխում ա էտ օցին, օցը նի յա խըրվում պատը:

Տա փաննորը էլհա վառում ա, հտ տրեսնում հորը հանգլիստը: Ըընապարին էլհա շիհում ա համին էն պառավ մարթին, ասում. — Պարյօր դորփեր:

Ասում ա. — Ասծու կրակը կըլխիտ:

Ասում ա. — Խե՛:

Ասում ա. — Ժողովուրթը էս ա մին տարի յա կըտորվում ա առանց արևի լոնսի:

էտ պառավ մարթը վըեր իտի յա ասում, էտ թաքավերին պուճուր տըղան թիլիբը հըվաքում ա, տամ էտ մարթին: էտ մարթը կըծկընին յոր ա օնում թա կըծկի, տրեսնում ա տրեղ-տրեղ կըտորած: էտ տըղան ասում ա. — էս խե՛ յա իստի:

էն պառավ մարթը ասում ա. — Հիշքան կըտորած տրեղեր կա, էնքան էլ մարթ ա մըհալ: էտ տըղան յոր ա օնում թանգան էտ թիլիբը կապում, սիպտակը՝ սիպտակին նըհետ, սըեվը՝ սըեվին, էլհա առաչվա նման կործը առաչ ա քյընում:

Տըղան քյընում ա, քյընում, հըսնում ուրան հորը հանգլիստը: Լոնսանում ա, ըտրանց պալատըմը գյուղում ըն, թա վազըր ըտրան կերալ ա, կյամ ըն տրեսնում փաննորը ծըեռքին սաղ-սալամաթ կաղնած, վազրին մաշկած, մորթին ընդեղ հր ընգած: Ըտրան շատ ըն թարիփ անում, տանում պալատը, քյըեփ անում:

Մին քանի վախտանը ետը էտ տըղան մըհտն ա քըցըմ են ըխ-  
ճըկանը, համ էլ ախպորցը խնթըմ ա, վեր քյինին ուրանց համար  
ախճիգի օղին: Ախպորցը յոր օնըմ, քյընըմ էն պալատը: Ըտէղ էն  
օցը պատավը քըշացալ ար, թա էն ըխճըկանը կոլ տա: Օցին սպա-  
նըմ ա:

Քյընըմ ա, տրեսնըմ մին խիլլւմ ժողովուրթը ըն հըվաքվալ,  
էտ ըխճըկանը հար թաքավերր ասըմ ա. — Ա՛յ ժողովուրթ, հու-  
վըեր էն օցին սպանալ ա, թող տոնս կյա, ախճիգյըս ընդրան ըմ տամ:  
Ժողովուրթին մաշան մինն ասըմ ա. «Յըհս ըմ ըսպանալ»,  
էն մինն ասըմ ա. «Յըհս ըմ ըսպանալ», լոխ սըտըստո:

էն թաքավերին պուճուր տըղան ղրաղ կաղնած լըսըմ ա, ետավ  
մուտանըմ ա էտ թաքավերին, ասըմ. — Թաքավերը ապրած կըննա,  
յըհս ըմ ըսպանալ օցին:

Թաքավերն ասըմ ա. — Բա հո՞ւնց ըս ըսպանալ:

Տըղան լոխ նաղլ ա անըմ: Թաքավերն ասըմ ա. — Դե վըեր  
տու լըս ըսպանալ, եք օցը պատան տոնս պըեր:

Տըղան քյընըմ ա օցը պատան տոնս պըերմ: Թաքավերն ասըմ  
ա. — Ինձ իրեք ախճիգլ օնիմ, իրեքան էլ քյեզ ըմ տամ:

Թաքավերին պուճուր տըղան մըհծ ախճիգյը տամ ա մըհծ ախ-  
պորը, միշնակ ախճիգյը տամ ա միշնակ ախպորը, պուճուր ախճի-  
գյըն էլ ինքն ա յոր օնըմ:

էտ ըխճըկերքը յոր ըն օնըմ, ետ աընոնում բիգի ուրանց հայ-  
րենիքը: Ճընապարին ըտրանք մին ծովի քըշաի շաղիր ըն յեր թո-  
ղըմ, վըեր քըշերը կըննան: Քըշերավը մըհծ ախպերը եր ա կըննըմ,  
թա քյինի իրեսը լըվանա, տըեսնըմ ա, մին օշափի շանք օց շա-  
գիրին շորս ղուավը փըթաթվալ ա, կըլոխն էլ տիրալ տըոնին առա-  
չին: էտ մըհծ ախպերը մին էլ նի յա մըննըմ շաղիրը, թեքլ ընգնըմ  
ուրան տըեղը:

Միշնակ ախպերն էլ ա իտի անըմ: Պուճուր ախպերը վըեր  
դուրթնանըմ ա, լոխճին եր ա կըցընըմ վըեր տոնս կյան շաղիրը  
քանդին, քյընան:

էտ օցը մըհծ ախպորը ուրան կընգանը նըհետ ա թողըմ, տոնս  
ըն կյամ, քյընըմ: Միշնակ ախպորը ուրան կընգանը նըհետ թողըմ  
ա, տոնս ըն կյամ, քյընըմ: Պուճուր ախպերն էլ ուրան կընգանը  
նըհետ օղըմ ա թա տոնս կյա, օցը թողըմ չի:

Թաքավերին պուճուր տըղան ասըմ ա. — Խե՞ չըս թողըմ,  
քյընինք:

Օցը ասում ա. — Յրես մուրազ օնիմ, բիդի կադարիս:

— Հի՛նչ մուրազ ա:

— Բիդի քիսիս Սինան թաքավերին թաքուն պրեններ, սերը-սեկրետը, գլիդան, կյաս, ինձ ասիս: Վրեր գլիդան վրեչ, քյրեզ կուլ ըմ տալու:

էտ տըղան ասում ա. — Բա կրենե՞գյս:

— Կրենգանըտ քրշերը յրես մարթ կըտըեռնամ, մարթոթուն անիմ, ցիրեկն էլ օց կըտըեռնամ:

Թաքավերին պուճուր տըղան մընըմ ա մաթալ: Դե հինչ ա՛նի, յաղու ծըեռք ա ընգա՛լ:

Տա ճընապար ա ընգնըմ, քյրնըմ: Քյրնըմ ա, քյրնըմ, շատ նան խրեգյր աստուժ կգլիդան, քյրնըմ ա հըսնըմ մին պառավ մարթի: Էտ պառավ մարթը ասում ա. — Ա՛ բալա, էտ ըշտըե՛ղ ըս քյրնըմ:

— Քյրնըմ ըմ Սինան թաքավերին սերը-սեկրետը պերիմ:

— Վա՛յ, վա՛յ, խրե՛ղճ տըղա, տու կարիլ չըս Սինան թաքավերին սերը-սեկրետը գլիդաս, եք կոշտըս, քյրեզ սըվըրցընիս: Վրեր իտի քիսիս, քու առաչըտ ա կյալու մին դալին ծըմակ, վրեր էտ ծըմակը տըեսնաս, կասիս. «էս հի՛նչ լավ ճընապար ա», վրեր ասիս վրեչ կտրելու չըս անց կըենաս: Ծտավ քյրնալու յըս, քյրեզ պըտը-հելու յա Զուճընուղ ղուշը: Էս ա քառասուն տարի յա էտ ղուշին վըեննը քարկեժ ա տըեռալ: Ըտըեղ մին շաղիր եր կըթողիս, մալին կըենաս: Վրեր էտ ղուշը կյա, մին սոր փըեդավ վըեննը կժակիս, վահարը տոնս կըկյա: Զալա առաչը ըսելու յա. «էտ հո՛ւ վըս, տոնս եք, քյրեզ հո՛ւմ-հո՛ւմ օտիմ...»: Ծտավ վրեր վըեննը դինշանա, ըսելու յա. «էտ հո՛ւ վըս, տոնս եք, հինչու օղիս, քյրեզ ըմ տալու»: Տոնս կըկյաս, ասիս. «Յրես Սինան թաքավերին սերը-սեկրետը ըմ օղըմ գլիդան»: Վրեր իտի ասիս, Զուճընուղ ղուշըն ըսելու յա. «Քյրեզ սըվըրցնողին վիզը կոտրի՛՞ս... Դե վրեր իտի յա քիսի, քու առաչըտ ա կյալու մին ծով: Էտ ծովին ճո՛ւրը վըետաժ ա ինելու: Կողի վըետաժ, մին խըրեգյ կխմիս, ասիս. «Ուխտա՛յ, էս հի՛նչ լավ ճո՛ւր ա»: Կասիս, պըրժընիս ճընապա ընգնիս, վրեր ասիս վրեչ, ծովը քյրեզ հըղե չի տալու: Ինք առ, քյրեզ մին թեփուտ էլ տամ, վրեր փիս տըեղ ընգնիս, թեփուտը վառի, կթռչիմ, հըսնիմ:

Թաքավերին տըղան քյրնըմ ա, Զուճընուղ ղուշը հոճըցը ասալ ա, իտի յա անըմ, վերը քյրնըմ Սինան թաքավերին պալատին քըշտին մին քարի յա նըստըմ: Մարթ ա ղըրկըմ, թա. «Մին տըղա յա յեկալ, օղըմ ա քյրեզ տըեսնա»:

Մինան թաքավերը ասում ա. — Թող կյա, բա էտ տրդան տրես-  
նում չի՞ էս պալատին շորս դուին վրեսկըռնի՞ն, պա ըտորան վախ շոնի՞,  
ա՜ շոնի՞, կըլխան ծընոք ա յեր կալա՞լ:

Թաքավերին պուճուր տրդան կյամ ա նի մննում, ասում. — Թա-  
քավերը ապրած կենա, իմ կրօնըս կրտրիլը կըտրելու յըն, լա՛վն էն ա,  
տու կըտրիս: Խընթըրմ ըմ քու սերըտ-սեկրետըտ ասիս, հտավ կըտ-  
րիս:

Թաքավերն ասում ա. — Ինձ իլա՛լ ա մին կընեգյ, մին ախճիգյ,  
մին դեմքուչ: Յըես հիշքան լա՛վ ծի պահողնի փըռնեցի, վըեր իմ  
ծիյանքըս լա՛վ պահի, էլհա քյընում ի տըեսնում ծիյանքըս լգար, նը-  
ղացած, էըկուան էլ քըռթընքած: Վըեր հըրցընում ի ծիյապահներին,  
թա. «Խե՛ յա իտի», սուս ին անում: Յըես էլ ըտրանց կըլոխը կըարիլ  
ի տամ: Նոքաթը կյամ ա մին քյասիբ տըղի, վըեր ծիյանքը պահի:  
Յըես էլ էտ քշերը քյընում ըմ թաքուն դարավուլ քաշըմ, տըեսնամ  
էտ խե՛ յա իտի: Մին էլ ըմ տըեսնում կընեգըս նան զեմքուչս եկին,  
ծիյանքը եր իլին, քյեցին: Մինչև ծըքծըքոտիլը տըեսնամ էս ա եկին,  
ծիյանքը կըպեցին, նի մըտին պալատը: Քյընում ըմ թա էտ տըղին  
կըլոխը կտրիլ տամ, ասում ա. «Թաքավերը ապրած կըենա, իմ կը-  
լոխըս կըարիլ մի, էս քըշեր տու եք ծիանքը պահի, կգլիդա՞ս: Էտ  
քըշեր յըես ծիյապահին շոքերը կյենում ըմ, քյընում, վըեր ծիյանքը  
պահիմ: Մին էլ ըմ տըեսնում էլհա կընեգյս, զեմքուչս եկին ծիյանքը  
օղեցին: Միյանքը տվի ըտրանց, յըես էլ մին օրիշ ծի նստեցի, ըտ-  
րանց հետան քյեցի: Քյընում ըմ տըեսնում մին մըեծ կարան, էտ  
կարանին մըեշին քառասուն դաշաղնի, ըտրանք քյընում ըն լոխճին  
նըհետ ուրանց գյըղաճըր անում, հտ տըեռնում:

Ըստըեղ էտ թաքավերը սուս ա անում, թառանշ քաշըմ, մին  
հետ ուրան վըեսկե նախշերավ շուքուխը քաշըմ, թանձըր ծոխը նի  
քաշըմ, էլհա նաղլ անում. — Վըեր էտ տըեսնում ըմ, հա՛լա սուս ըմ  
անում: Ամմա զեմքուչս շատ օխժը կծածըն ար, խորամանգ աղվես,  
փանդը-փիլ գյըղո՞ղ, լուղվավը օխժը պունան հանող, մին օղգյա  
պըե՛ն: Տա կըլխուլ յա ընգնում, վըեր յըես ուրանց քըմական թաքուն  
քյեցալ ըմ: Տա էտ դաշաղներին իմաց ա տամ, ըտրանք ինձ փըռ-  
նում ըն վըենըծեոքըս կապըմ, եր քըցըմ: Զեմքուչըս էլ ծընոքին  
մին ճըպատ ա ինում, էտ ճըպատավը համ ինձ թըխըս ա, համ էլ  
ասում. «Թաքավերը շոն տրեռնա, թաքավերը շոն տրեռնա...»: Յըես  
շոն ըմ տըեռնում:

Վըեր կյամ ըն պալատ, տըեսնում ըն ուրանց հացթուխը հաց

Թրխելիս, ըտրա ախճիգլըն էլ խոնշին յրան պոլերը կըրելիս: Զեմքուչըս էտ ըխճըկանն ասըմ ա. «Ախճի՛, էտ շանը տար հաց տո, տար ծեր տանը պահի»: էտ ախճիգլը շոնր տոն ա տանըմ, համ էլ ասըմ. «Ա մար, էս շանը աշկերը հենց ա մըեր Սինան թաքավերին աշկերը ինի: Մարն ասըմ ա. Երեստ կըտրի, Սինան թաքավերը կըլսի, կկյա՛ քյըեզ կը սպանի»: էտ ախճիգլը կյամ ա պալատը, ման կյամ, մա՛ն, տըեսնըմ թաքավերը պալատըմը չի, մին օթախի տըռանը քըմակին էլ մին ճըպատ տիրած: էտ ախճիգլը շոտաննց լըսած ա ինու՛մ էտ ճըպատին մասին, գյուղո՛ւմ ա ինու՛մ ըտրա գորութոնը: Ճըպատը յօր օնըմ քյընըմ, քրթենըմ շանը, ճըպատավը թըխըմ, ասըմ. «Մըեր թաքավերը հունցու շոն ա տըեռալ, ինդի էլ թաքավեր տըեռնա:»

Յըես, Սինան թաքավերս, թաղաղան մարթ ըմ տըեռնըմ, նըստըմ իմ թախտին: էտ ճըպատը յոր օնըմ, կընգանս թըխըմ, ասըմ. «Մին սըեմ էշ տըեռ, մեշկիտ էլ մին մըեծ յարա: Իտի էլ տըեռնըմ ա: Զեմքուչիս կանչըմ ըմ էտ ճըպատավը թըխըմ, ասըմ. «Ա՛՛ զեմքուչ, ազար-ըրեղա՛ր, մին սըեմ ակոսմ տըեռ, քյընա՛ ամեն օր ըխճըկանըտ մըեշկին յարան կըտկոտի»: Իտի էլ տըեռնըմ ա:

Ըստըեզ Սինան թաքավերը ուրան խոսկը պըրծընըմ ա, ասըմ. — էս ա իմ սերս-սեկըետս, ա՛ շահիլ տըղա: Դե մըհեզ էլ բիդի քու կլոխտ կըարիլ տամ:

Թաքավերին պուճուր տըղան ասըմ ա. — Թաքավերը ապրած կըենա, թող տուս կյամ մին խըրեզ ըշխարքիս եշիմ, էլհա կյամ:

Թաքավերը թողըմ ա: էտ տըղան քյընըմ ա մին քյունշ նի մըննըմ, Զու՛մրոտ դուշին թեփուռը չուքան հանըմ, վառըմ: Վըեր վառըմ ա, Զու՛մրոտ դուշը ծըեռաց կյամ ա, թաքավերին պուճուր տըղան նըստըմ ա ընդրա մըեշկին թեքին թափ ա տամ, թա թըուչի, Սինան թաքավերին ախճիգլը ասըմ ա. — Հինչ կինի ինձ էլ նըհետըտ տանիս, հունցու քու կընեգլըտ:

— Յըես կընեզ օնիմ:

— Դե հո՛ւնց անինք, ինձ էլ տար:— Ըտրան էլ ա յոր օնըմ տինըմ թեքին, քյընըմ ըն:

Հարայը պալատըն ա ընգնըմ, թա թաքավերին սերը-սեկըետը տարին, ախճիգլը տարին: էտ վըեր Սինան թաքավերը լըսըմ ա, ծըեռաց սըերտը ճաքըմ ա, մըեռնըմ:

Ըտրանք թըռչում են, քլընում համին էտ օցին կոշտը. թաքա-  
վերին պուճուր տըղան Սինան թաքավերին սերը-սեկրետը ըտրան  
նաղլ ա անում. օցըն էլ ըտրա կընեգլը տամ ա ուրան, յոր ա օնում  
էտ ըխճըկանը նըհետ կլամ ուրան հայրենիքը, ուրան հորը պալատը:  
Ըտընդ լամ հըրսանիք ըն անում, լամ էլ ախպերք-ախպերք ապրում,  
ժողովուրթին էլ լամ հընում:

